ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

1990 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-ԻՆ ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ (ԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ՝ 2016Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ ԴԻՄՈՒՄԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ.

ա/ ՀՀ Նախագահի դիմումին կցված նյութերը չեն համապատասխանում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերի պահանջներին, մասնավորապես, միջազգային պայմանագրի հայերեն թարգմանությունը լիարժեք չի արտացոլում պայմանագրի բնագրով նախատեսված իրավակարգավորումները ու դրանով ստանձնված պարտավորությունները,

բ/ սույն գործով ՀՀ Նախագահի պաշտոնական ներկայացուցիչն օրենքով սահմանված ժամկետներում Սահմանադրական դատարանի պահանջով չի ապահովել առկա անհամապատասխանությունների վերացումը եւ լրացել են ՀՀ Սահմանադրության /2005թ. խմբագրությամբ/ 100-րդ հոդվածի 2-րդ կետում նշված հարցերով ներկայացված դիմումների նախնական ուսումնասիրման համար օրենքով և Սահմանադրական դատարանի կանոնակարգով նախատեսված ժամկետները,

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

Վերադարձնել 1990 թվականի հունիսի 26-ին Ստամբուլում ստորագրված՝ Ժամանակավոր ներմուծման մասին կոնվենցիայում (կից հայտարարությամբ) ամրագրված պարտավորությունների՝Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ 2016թ. նոյեմբերի 8-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

6 դեկտեմբերի 2016 թվականի
ՍԴԱՈ-110